

հնազանդ էին Ս. Գերեզմանի, այնպէս որ առանց հաւանութեան մեծաւորին, չէին կրնար վաճառել իրենց այգիներն, և եթէ վաճառումը տեղի ունենար, արդիւնքին կէսը կը տրուէր նոյն մեծաւորին: Ասկէց զատ ուէ ստացուածք չէին կրնար ծախել Տաճարականաց և կամ ուրիշ եկեղեցիի մը. նոր այգիները պարտաւոր էին տնկել Ս. Գերեզմանի հողերուն վրայ. նոյն քաղաքացիներէն շատերը տեղւոյն հասարակութեան կը յատկացնէին իրենց անձը և ստացուածքը: Ս. Գերեզմանը՝ հողերէ և տուներէ զատ, էլ-Պիրէհի մէջ, ո՛չ միայն գերիշխանութեան ոյժով, այլ ուղղակի կը ժառանգէր դղեակ մը, եկեղեցի մը և աւազան մը. գիւղն օժտուած էր նաև հիւանդանոցով մը, ուխտաւորներու յատուկ հիւրանոցով մը, որ տեղւոյն սեպհականութիւնն էր. եկեղեցին կը կրէր Ս. Կուսին անունը, անոր ստացուածոց մատակարարութիւնը ստանձնած էր Ս. Գերեզմանի կողմէն կարգուած անձը: Եկեղեցիին մօտ տնկած էին քարէ խաչ մը, եօթն աստիճան պատուանդանի մը վրայ, ուրկէ ուխտաւորք կրնային նշմարել Երուսաղէմի Դաւթի աշտարակը (Revue Biblique, 1926, N<sup>o</sup> 2):

### 3. Էլ-Պիրէհի եկեղեցւոյն հնախօսական ֆնմութիւնները.

Նոյն եկեղեցւոյն հնախօսական քննութիւնը առաջին անգամ կատարած է Կոմս Մելքիօր տը Վօկիւէ (1829-1916), և իր քննութեան արդիւնքը հրատարակած է իր մէկ գրքին մէջ, (Les Eglises de la Terre Sainte, էջ 338-39), ուր կը գրէ թէ անձամբ այցելած է Էլ-Պիրէհի եկեղեցւոյն, զորս շինած են առաջին խաչակիրք: Անոր կառուցուածքը նման է Երուսաղէմի Ս. Յովակիմ-Աննա եկեղեցւոյն ճարտարապետութեան, քառակուսի մըն է, 31 մէթր երկայն և 18 մէթր լայն, ունի երեք բաժանումներ. եկեղեցին կամարակապ էր Ս. Յովակիմ-Աննա եկեղեցւոյն նըման. կրկնակամարներն կը հանգչին քառակուսի սիւներուն վըրայ, կամարներ որ կ'ընդհատուէին գետինը հասնելէ յառաջ, և ծնօտներով (saillie) կը կապուէին պատերուն: Եկեղեցւոյն հիւսիսային պատը և կողակը (abside) տակաւին անփնաս մնացած են քաց աստի, եկեղեցւոյն աւերակաց մէջ տեսնուած է կամարա-